ՊԵՏՈՒԹՅԱՆԿԱՐԻՔՆԵՐԻՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ԳՈՒ4-ՄԱ-ԱՊՁԲ-Վ-01/20

«17» փետրվարի 2020թ.

ք. Գյումրի

«Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարան» ՊՈԱԿ-ը ի դեմս տնօրեն՝ Ք. Ահարոնյանի, որը գործում էկանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և «Մաքս Օիլ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն՝ Կ. Մելքոնյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն Պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկԳնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են *10* օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են *20* օրից ավելի,

2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Որակավորման և պայմանագրի ապահովում ներկայացրած անձը պարտավոր է ապահովումների գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 105 000 /մեկ հարյուր հինգ հազար/ ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն 20% 17500 /տասնյոթ հազար հինգ հարյուր: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.2 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1) և հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (հավելված N 3):

5.2 Հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրվում է, եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Գնորդը՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.3 Գնորդը հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 2 աշխատանքային օրվա ընթացքում Վաճառողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ապրանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

5.4 Եթե պայմանագրի 5.3 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:[20] Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտվորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 ՊայմանագիրնուժիմեջէմտնումԿողմերիստորագրմանպահից և գործում է մինչևկողմերի՝ պայմանագրովստանձնածպարտավորություններիողջծավալովկատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:[21]

---

[20] *Եթե պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ապա տուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է ստանձնված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը: Եթե պայմանագիրը ներառում է մեկից ավել չափաբաժին, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ:*

[21] *Պետական բյուջեի միջոցների հաշվին պարտավորություններ չառաջացնող գնումների դեպքում սույն նախադասությունը պայմանագրից հանվում է:*

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Եթե պայմանագիրն իրականացվում է գործակալության պայմանագիր կնքելու միջոցով.

1) Վաճառողը պատասխանատվություն է կրում գործակալի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

8.7 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում,պայմանով, որԳնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով իսկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.8 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.9 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքովկամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.10 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկվում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին:

8.11 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.12 Պայմանագիրը կազմված է _____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.13 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
«Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարան» ՊՈԱԿ	«Մաքս Օիլ»ՍՊԸ
ք. Գյումրի, «Անի»թաղ. 11փ 5/2	Ք.Երևան, Տպագրիչների 8
ՀՎՀՀ 05536355	ՀՎՀՀ՝ 02662703
Հ/Հ 9002180005872950	Հ/Հ 1570026452480100
Գյումրիի գանձապետական բաժանմունք	«Ամերիաբանկ» ք.Երևան
----------	----------
(ստորագրություն)	(ստորագրություն)
Տնօրեն՝ Ք. Սհարոնյան	Տնօրեն՝ Կ.Մելքոնյան
Կ.Տ.	Կ.Տ.

Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

Հավելված N 1
«17» փետրվար 2020 թ. կնքված
ԳՈՒ4-ՄԱ-ԱՊՁԲ-Վ- 01/20 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

համարը	Միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	Անվանումը և ապրանքային նշանը	տեխնիկական բնութագիրը	չափման միավոր	միավոր գին ՀՀ դրամ	ընդհանուր գին ՀՀ դրամ	ներմուծման մաքսատուրքը	Մատակարարման	
								հասցեն	2
		Համակարգչային սարքավորումներ և նյութեր							
1	09132100	Բենզին պրեմիում	Արտաքին տեսքը՝ մաքուր և պարզ, օկտանային թիվը որոշված հետազոտական մեթոդով՝ ոչ պակաս 95, շարժիչային մեթոդով՝ ոչ պակաս 85, բենզինի հագեցած գոլորշիների ճնշումը՝ 45-100 կՊա, կապարի պարունակությունը 5 մգ/դմ3-ից ոչ ավելի, բենզոլի ծավալային մասը 1% -ից ոչ ավելի, խտությունը՝ 15 ^{0} C ջերմաստիճանում՝ 720-775 կգ/մ^3, ծծմբի պարունակությունը 10 մգ/կգ-ից ոչ ավելի, թթվածնի զանգվածային մասը 2,7%-ից ոչ ավելի, օքսիդիչների ծավալային մասը, ոչ ավելի՝ մեթանոլ-3%, էթանոլ-5%, իզոպրոպիլ սպիրտ-10%, իզոբուտիլ սպիրտ-10%, եռաբութիլ սպիրտ-7%, եթերներ (C_5 և ավելի)-15%, այլ օքսիդիչներ-10%, անվտանգությունը՝ ըստ ՀՀ կառավարության 2004թ. նոյեմբերի 11-ի N 1592-Ն որոշմամբ հաստատված «Ներքին այրման շարժիչային վառելիքների տեխնիկական կանոնակարգի»	լիտր	420	105000	250	Ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2	250
		Ընդամենը				105000			

Մատակարարման ժամկետը. Սույն պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից հետո յուրաքանչյուր անգամ Պատվիրատուից պատվերը ստանալուց հետո ամենաուշը՝ 7 աշխատանքային օրվա ընթացքում :

ԳՆՈՐԴ

«Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարան» ՊՈԱԿ
Ք. Գյումրի, «Անի»թաղ. 11փ 5/2
ՀՎՀՀ 05536355
Հ/Հ 9002180005872950
Գյումրիի գանձապետական բաժանմունք

(ստորագրություն)
Տնօրեն Ք. Մուրադյան
Կ.Տ.

ՎԱՃԱՌՈՂ

«Մաքս Օիլ»ՍՊԸ
Ք.Երևան, Տպագրիչների8
ՀՎՀՀ՝ 02662703
Հ/Հ 1570026452480100
«Ամերիաբանկ» ք.Երևան

(ստորագրություն)
Տնօրեն՝ Կ.Մելքոնյան
Կ.Տ.

Հավելված N 2

«17» փետրվար 2020 թ. կնքված
ԳՈՒ4-ՄԱ-ԱՊՁԲ-Վ- 01/20 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀդրամ

2Ապրանքի

Համարը	միջանցիկծածկագիրը՝ ըստԳՄԱդասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2020թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	Փետրվար ապրիլ	Մարտ մայիս	Ապրիլ հունիս	Մայիս հուլիս	Հունիս օգոստոս	Հուլիս սեպտեմբեր	Օգոստոս հոկտեմբեր	Սեպտեմբեր նոյեմբեր	Հոկտեմբեր դեկտեմբեր	Նոյեմբեր դեկտեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	09132100	Բենզին պրեմիում				105000	105000	105000	105000	105000	105000	105000	105000	105000	105000

** Վճարման են թակագումարներըներկայացվում են աճողականկարգով:*

ԳՆՈՐԴ

«Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարան» ՊՈԱԿ
ք. Գյումրի, «Անի»թաղ. 11փ 5/2
ՀՎՀՀ 05536355
Հ/Հ 9002180005872950
Գյումրիի գանձապետական բաժանմունք

(ստորագրություն)
Տնօրեն Թ. Ահարոնյան
Կ.Տ.

ՎԱՃԱՌՈՂ

«Մաքս Օիլ»ՍՊԸ

ք.Երևան,Տպագրիչների 8

ՀՎՀՀ՝ 02662703
Հ/Հ 1570026452480100
«Ամերիաբանկ» ք.Երևան

(ստորագրություն)
Տնօրեն Կ.Մելքոնյան

Հավելված N 3
«17» փետրվար 2020 թ. կնքված
ԳՈՒ4-ՄԱ-ԱՊՁԲ-Վ- 01/20 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրիկողմ

_____
_____
գտնվելուվայրը _____
հհ _____
հվհհ _____

Պատվիրատու

_____
_____
գտնվելուվայրը _____
հհ_____
հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻԿԱՄԴՐԱՄԻՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « »20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____

_____
Պայմանագրիկնքմանամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրիհամարը՝ _____
ՊատվիրատունևՊայմանագրիկողմը՝հիմք ընդունելովպայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
ՊայմանագրիշրջանակներումՊայմանագրի կողմը մատակարարելէհետևյալապրանքները՝

N	Մատակարարվածապրանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց

_____
ստորագրություն

_____
ազգանուն, անուն

Կ.Տ.

Ապրանքը ընդունեց

_____
ստորագրություն

_____
ազգանուն, անուն

Կ.Տ.

Հավելված3.1
«17» փետրվարի 2020 թ. կնքված
ԳՈՒ4-ՄԱ-ԱՊՁԲ-Վ- 01/20 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N _____
պայմանագրիարդյունքըԳնորդինհանձնելուփաստըֆիքսելուվերաբերյալ

Սույնով արձանագրվումէ, որ _____-ի (այսուհետ՝ Գնորդ) և _____
Գնորդիանվանումը Վաճառողիանվանումը
(այսուհետ՝ Վաճառող)միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
Ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
Ստորագրություն

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N ԳՈՒ4-ՄԱ-ԱՊՁԲ-Վ-01/20-1
17.02.20թ-ի N ԳՈՒ4-ՄԱ-ԱՊՁԲ-Վ- 01/20
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

«06» ապրիլի 2020 թ.

ք. Գյումրի

«Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարան» ՊՈԱԿ-ը ի դեմս տնօրեն՝ Ք. Ահարոնյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և «Մաքս Օիլ» ՍՊԸ-ն ը ի դեմս տնօրեն՝ Կ.Մելքոնյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին:

1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. 17.02.2020թ-ին կնքված ՈԳՈՒ4-ՄԱ-ԱՊՁԲ-Վ-01/20 պայմանագրի N1 հավելվածը փոխել և սահմանել համաձայն սույն համաձայնագրի ՀԱՎԵԼՎԱԾ 1-ի:

1.2. 17.02.2020թ-ին կնքված ՈԳՈՒ4-ՄԱ-ԱՊՁԲ-Վ-01/20 պայմանագրի N 2 հավելվածը փոխել և սահմանել համաձայն սույն համաձայնագրի ՀԱՎԵԼՎԱԾ 2-ի:

1.3. 17.02.2020թ-ին կնքված ՈԳՈՒ4-ՄԱ-ԱՊՁԲ-Վ-01/20 պայմանագրի 3.1 կետում պայմանագրի արժեքը փոխել սահմանել 80 000 /ութսուն հազար/ ՀՀ դրամ:

2. Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է պայմանագրի անբաժանելի մասը:
3. Սույն համաձայնագրով չնշված՝ Պայմանագրով ստանձնած կողմերի իրավունքներն ու պարտականությունները մնում են անփոփոխ:
4. Սույն համաձայնագիրը կազմված է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

5. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
«Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարան» ՊՈԱԿ	«Մաքս Օիլ»ՍՊԸ
ք. Գյումրի, «Անի»թաղ. 11փ 5/2	ք.Երևան. Տպագրիչների 8
ՀՎՀՀ 05536355	ՀՎՀՀ 02662703
Հ/Հ 9002180005872950	Հ/Հ 1570026452480100
Գյումրիի գանձապետական բաժանմունք	«Ամերիաբանկ» ք.Երևան
(ստորագրություն)	(ստորագրություն)
Տնօրեն՝ Ք. Ահարոնյան	Տնօրեն՝ Կ.Մելքոնյան
Կ.Տ.	

Հավելված N 1
«06» ապրիլի 2020 թ. կնքված
ԳՈՒ4-ՄԱ-ԱՊՁԲ-Վ- 01/20-1 ծածկագրով համաձայնագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Համարը	Միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	Անվանումը և ապրանքային նշանը	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	միավոր գին առանց ՀՀ դրամ	ընդհանուր գին ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատակարարման		
								հասցեն	4	5
		Համակարգչային սարքավորումներ և նյութեր								
1	09132100	Բենզին պրեմիում	Արտաքին տեսքը՝ մաքուր և պարզ, օկտանային թիվը որոշված հետազոտական մեթոդով՝ ոչ պակաս 95, շարժիչային մեթոդով՝ ոչ պակաս 85, բենզինի հագեցած գոլորշիների ճնշումը՝ 45-100 կՊա, կապարի պարունակությունը 5 մգ/դմ3-ից ոչ ավելի, բենզոլի ծավալային մասը 1% -ից ոչ ավելի, խտությունը՝ 15 ^{0} C ջերմաստիճանում՝ 720-775 կգ/մ^3, ծծմբի պարունակությունը 10 մգ/կգ-ից ոչ ավելի, թթվածնի զանգվածային մասը 2,7%-ից ոչ ավելի, օքսիդիչների ծավալային մասը, ոչ ավելի՝ մեթանոլ-3%, էթանոլ-5%, իզոպրոպիլ սպիրտ-10%, իզոբուտիլ սպիրտ-10%, եռաբութիլ սպիրտ-7%, եթերներ (C_5 և ավելի)-15%, այլ օքսիդիչներ-10%, անվտանգությունը՝ ըստ ՀՀ կառավարության 2004թ. նոյեմբերի 11-ի N 1592-Ն որոշմամբ հաստատված «Ներքին այրման շարժիչային վառելիքների տեխնիկական կանոնակարգի»	լիտր	320	80 000	250	ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2	150	100
		Ընդամենը				105000				

Մատակարարման ժամկետը. Սույն պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից հետո յուրաքանչյուր անգամ Պատվիրատուից պատվերը ստանալուց հետո ամենաուշը 7 աշխատանքային օրվա ընթացքում :

ԳՆՈՐԴ

«Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարան» ՊՈԱԿ
ք. Գյումրի, «Անի»թաղ. 11փ 5/2
ՀՎՀՀ 05536355
Հ/Հ 9002180005872950
Գյումրիի գանձապետական բաժանմունք

(ստորագրություն)
Տնօրեն Ք. Ահարոնյան
Կ.Տ.

ՎԱՃԱՌՈՂ

«Մաքս Օիլ»ՍՊԸ
Ք.Երևան, Տպագրիչների 8
ՀՎՀՀ 02662703
Հ/Հ 1570026452480100
«Ամերիաբանկ» ք.Երևան

(ստորագրություն)
Տնօրեն Կ.Մելքոնյան
Կ.Տ.

Հավելված N 2
«06» ապրիլի 2020 թ. կնքված
ԳՈՒ4-ՄԱ-ԱՊՁԲ-Վ- 01/20-1 ծածկագրով համաձայնագրի

ՎՃԱՐՄԱՆԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀդրամ

2Ապրանքի

Համարը	միջանցիկծածկագիրը՝ ըստԳՄԱդասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2020թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ հունիս	Մայիս հուլիս	Հունիս օգոստոս	Հուլիս սեպտեմբեր	Օգոստոս հոկտեմբեր	Սեպտեմբեր նոյեմբեր	Հոկտեմբեր դեկտեմբեր	Նոյեմբեր դեկտեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	09132100	Բենզին պրեմիում				48000	80000	80000	80000	80000	80000	80000	80000	80000	80000

** Վճարման են թակագումարներըներկայացվում են աճողականկարգով:*

ԳՆՈՐԴ

«Գյումրու թիվ 4 արհեստագործական
պետական ուսումնարան» ՊՈԱԿ
ք. Գյումրի, «Անի»թաղ. 11փ 5/2
ՀՎՀՀ 05536355
Հ/Հ 9002180005872950
Գյումրիի գանձապետական բաժանմունք

(ստորագրություն)
Տնօրեն՝ Ք. Սիսարոնյան
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ

«Մաքս Օիլ»ՍՊԸ
Ք.Երևան, Տպագրիչների 8
ՀՎՀՀ՝ 02662703
Հ/Հ 1570026452480100
«Ամերիաբանկ» ք.Երևան

(ստորագրություն)
Տնօրեն՝ Ա.Մելքոնյան

Հավելված 3
«17» փետրվարի 2020 թ. կնքված
ԳՈՒ4-ՄԱ-ԱՊՁԲ-Վ- 01/20 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ
Մաքս Օիլ ՍՊԸ

ք.Երևան, Տպագրիչների 8
հհ Հ/Հ 1570026452480100
Ամերիաբանկ ք.Երևան
հվհհ 02662703

Պատվիրատու
« Գյումրու թիվ 4 արհեստագործական
պետական ուսումնարան»ՊՈԱԿ
ք. Գյումրի, «Անի» թաղ. 11փ 5/2
հհ 9002180005872950
Գյումրիի գանձապետական բաժանմունք
Հվհհ 05536355

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N1
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

«10» «ապրիլի » 2020 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ **Պետության կարիքների համար ապրանքների մատակարարման պայմանագիր**
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «17» «փետրվարի» 2020թ.
Պայմանագրի համարը՝ ԳՈՒ4-ՄԱ-ԱՊՁԲ-Վ-01/20
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ «10» «ապրիլի» 2020թ. դուրս գրված N Ա2994838218 հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		
	Բենզին պրեմիում	Արտաքին տեսքը՝ մաքուր և պարզ, օկտանային թիվը որոշված հետազոտ. մեթոդով՝ ոչ պակաս 95, շարժիչ. մեթոդով՝ ոչ պակաս 85, բենզինի հագեցած գոլորշիների ճնշումը՝ 45-100 կՊա, կապարի պարունակ. 5 մգ/դմ3-ից ոչ ավելի, բենզոլի ծավալային մասը 1% -ից ոչ ավելի, խտ.՝ 15 ^{0} C ջերմ.-ում՝ 720-775 կգ/մ^3, ծծմբի պարունակ. 10 մգ/կգ-ից ոչ ավելի, թթվածնի զանգվ. մասը 2,7%-ից ոչ ավելի, օքսիդիչների ծավալ մասը, ոչ ավելի՝ մեթանոլ-3%, էթանոլ-5%, իզոպրոպիլ սպիրտ-10%, իզոբուտիլ սպիրտ-10%, եռաբութիլ սպիրտ-7%, եթերներ (C_5 և ավելի)-15%, այլ օքսիդիչներ-10%, անվտանգ.՝ ըստ ՀՀ կառավ. 2004թ. նոյեմբերի 11-ի N 1592-Ն որոշ. Հաստ. «Ներքին այրման շարժիչային վառելիքների տեխնիկական կանոնակարգի»	150	150	30.04.2020	10.04.2020	48.00	30.06.20թ.

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց
ստորագրություն
Մելքոնյան Կ.
ազգանուն, անուն
Կ.S.

Ծառայությունն ընդունեց
ստորագրություն
ազգանուն, անուն
Կ.S.

[1] Դուրս գրման ամսաթիվ			Հարկային հաշիվ (ապրանքների մատակարարման)	[2] Սերիա	[3] Համար
10	Ապրիլ	2020 թ.		Ա	2994838218
[4] Մատակարարման ամսաթիվ					
10	Ապրիլ	2020 թ.		Ճշգրտվող հաշվի	
				Սերիա	Համար
				Ճշգրտվող հաշվի դուրս գրման ամսաթիվ	

Պայմանագիր	[5] Կնքման ամսաթիվ	[6] Համար

[7] Լրացուցիչ տվյալներ (պայմաններ)

[7.1] ՀԴՄ կտրոնի համար

Ապրանքներ մատակարարող (առաքող) անձի										
[8] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ)	0	2	6	6	2	7	0	3		
[9] Անվանումը	«ՄԱՔՍ ՕԻԼ» Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն (ՍՊԸ)									
[10] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը	0	2	6	6	2	7	0	3	/	1
[11] Բանկային տվյալները	ԱՄԵՐԻԱԲԱՆԿ ՓԲԸ	N 1570026452480100								
[12] Գտնվելու վայրը (հասցեն)	ԵՐԵՎԱՆ ՆՈՐՔ-ՄԱՐԱՇ ՆՈՐՔ-ՄԱՐԱՇ ԹԱՂԱՄԱՍ ՏԵՐՅԱՆ Փ. 66 31									
[13] Վայրը, որտեղից ապրանքները մատակարարվում են	Շիրակի մարզ,գ.Ախուրյան, Գյումրու խճուղի 1 փակուղի 4/1									
[14] Լրացուցիչ տվյալներ										

Ապրանքներ ձեռք բերող անձի										
[15] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) (ֆիզիկական անձի անձնագրի սերիան և համարը)	0	5	5	3	6	3	5	5		
[16] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը										
[17] Անվանումը	ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ,ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ԳՅՈՒՄՐՈՒ ԹԻՎ4 ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ» Պետական ոչ առևտրային կազմակերպություն (ՊՈԱԿ)									
[18] Բանկային տվյալները	Գյումրու գանձապետական բաժանմունք	N 9002180005872950								
[19] Գտնվելու վայրը (հասցեն)	ՇԻՐԱԿ ԳՅՈՒՄՐԻ ԳՅՈՒՄՐԻ Անի թաղ. 11փ. 5 2									
[20] Լրացուցիչ տվյալներ										
[21] Ում միջոցով	Անուն, ազգանուն									
	Լիազորագիր	Համար								
		Ամսաթիվ								
[22] Ապրանքների մատակարարման (առաքման) եղանակը	կտրոն									
[23] Մատակարարվող (առաքվող) ապրանքների նշանակման վայրը (հասցեն)	Շիրակ, Գյումրի, Անի թաղամաս, 11 փողոց, 5/2									

[24] Մատակարարվող ապրանքների քանակի և վճարման ենթակա գումարի հաշվարկը

N	Ապրանքի անվանումը	Չափման միավորը	Քանակը	Միավորի գինը	Զեղչ(%)	Արժեքը	ԱԱՀ դրույքաչափը (%)	ԱԱՀ գումարը	Ընդամենը	Այդ թվում՝ բնապ. հարկ
1	2	3	4	5	6	7	8	9	10	11
1	Ավտոմոբիլային բենզին ԱԻ 95 Կ-5	լ	150	266.6667		40000	20	8000	48000	0
Ընդամենը						40000	X	8000	48000	0

Դուրս գրող՝ MURADYAN HOVHANNES 2907650114
անուն, ազգանուն

*Ստացող՝ AHARONYAN KNARIK 5708640316
անուն, ազգանուն

10/04/2020 11:56:20

13/04/2020 13:39:40